



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 54 43 03

**«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին
պատճենը՝ Կենտրոնի հարկային տեսչության
պետ պարոն Ա. Հարությունյանին**

Հարգելի պարոն Թադևոսյան

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով՝ Ձեր 21.04.2016թ. N020 գրության վերաբերյալ հայտնում եմ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե հրապարակային պայմանագրի համաձայն, ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձը հրապարակային պայմանագրով առևտրային զեղչերի կիրառման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ առևտրային զեղչեր կիրառելու վերաբերյալ: Հայտարարության ձևը սահմանվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.01.2013թ. «Հրապարակային պայմանագրով նախատեսված առևտրային զեղչերի կիրառման վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող հայտարարության ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N10-Ն հրամանով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ԱԱՀ վճարողները հնարավորություն ունեն հրապարակային պայմանագրով նախատեսված առևտրային զեղչերի կիրառման վերաբերյալ հայտարարությունը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով:

Ինչ վերաբերում է գրությանը կից ներկայացված առաջարկությանը, ապա հայտնում եմ, որ Հարկային օրենսգրքի նախագծով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման համար նախատեսվում է նոր կարգավորումներ, և մինչև օրենսգրքի ընդունումը ներառող կարճաժամկետ հատվածում օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի մասով փոփոխությունների կատարումը համարում ենք ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝

 **Վ. Միրումյան**